

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

4 սեպտեմբերի 2008 թվականների N 1038-Ն

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ
ՁԵՎԸ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ մասին և
«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին
մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ**
ու մ է.

1. Հաստատել

1) ֆիզիկական անձի գույքի և եկամուտների հայտարարագրի ձևը՝ համաձայն N 1
հավելվածի.

2) ֆիզիկական անձի տարեկան եկամուտների մասին հաշվարկը՝ համաձայն N 2
հավելվածի.

3) ֆիզիկական անձի գույքի և եկամուտների հայտարարագրի լրացման կարգը՝
համաձայն N 3 հավելվածի.

4) ֆիզիկական անձի տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկը՝
համաձայն N 4 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության
2002 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության իշխանության
մարմինների ղեկավար աշխատողների ու նրանց փոխկապակցված անձանց գույքի և
եկամուտների հայտարարագրի ձևերը, դրանց լրացման և պահպանման կարգերը
հաստատելու մասին» N 27 որոշումը.

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում 2009 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ՝

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ